



Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:



իյա դրամ 1 ճառագրատի տմադարս
նիք միգրաց Նաուր 88 լիգ իսխատմ

Հանրագիտակ ձևով. կր ժախտի Պարսոյ մէջ հաստ
20, իսկ գաւառաց մէջ 50 փարսոյ:



ՀԱՆԳԵՍ

هازراكيداق

HANRAKIDAGUE

ՏԱՍՆՕՐԵԱՅ

مجموعه علوم

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե՛ՏԱՐԻ — ՆՈՐ ԵՐԶԱՆ

ԹԻԻ 24

26 ԱՊՐԻԼ 1902



ՊԶՏԻԿ՝ ԲԱՅՑ ՍԵԾ

Իս, նայեցե՛ք, բոնպուլ ոսկերս ինչքան պզտիկ ու փափուկ ,
Բայց կը քաշեմ, կը վազվզեմ ու կը խաղամ ցաւկերսուք ,
Հոգ չե՛, որչափ փողոցները մեծ եւ երկար ալ ըլլան ,
Ոսկերս փոքր , սակայն կտրած ասպարեզներն որքա՛ն լայն .

Եւ նայեցե՛ք, այս երբունքներս որչափ փոքր կըն եմ ,
Հագիւ բոքով քանի մը բառ , կիսաս վանկեր գորեն .
Բայց ի՛նչ բառեր՝ երբունքներուս անոյ՛ց յանկերգը կ'ըլլան .
— Մայրիկ, հայրիկ, Աստուած , Յիսուս , երկինք , արեւ , լուսնական :

Հապա՛, սա իմ կապոյտ աչերս որքան փոքր ու փափկիկ ,
Ինչ մեծ , շեղ տեսարաններ՝ աչիս կ'ըլլան խաղալիկ :
Լեռներ , ձորեր , երկինք , լուսին ինչքան ըլլան . չեն պայծառ ,
Այս իմ պզտիկ սուր աչերէս վրիպիլ բնաւ չեն կրնար :

Նաեւ տեսե՛ք, այս ականջներն որքան սկար , անկեան ,
Բայց կը լսեն սիրադաշնակ եղանակներ քաղցրա՛յն ,
Իրաւ , կրգգաս քե անկարող մանուկ մըն եմ փափկասուն ,
Բայց կը ջանամ կարճ քեւերովս բռնել երկինքն իսկ անհուն :


* * *

Ես մեծ եմ մեծ , քե եւ պզտիկ
Իմ հասակիս մի՛ նայիք ,
Այս հունաւոր մարմնոյս մեջ , Տե՛ր ,
Իր վե՛ր անհուն դրաւ պաւկեր :

Այս սպիտակ կուրծքիս ներքեւ տրոփուն սիրտ մը կայ անգոր,
Դիտե՛, սակայն, զգալ, սիրել, զքալ, պատշեղ ամեն օր,
Տկար է սեռս, բայց սիրածներս — Աստուած, ծնողք, բոյր, եղբայր —
Իմ պզտիկ սեր անհունութիւնն գրկել ցանկայ լայնասարր :

Ես մեծ եմ մեծ, քե՛ եւ պզտիկ
Իմ հասակիս մի՛ նայիք,
Այս հունաւոր սրտիս մեջ, Տե՛ր,
Ի՛ր վեհ, անհուն դրաւ պատկեր :

ԱԿԻԻԼԻՆԷ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԵՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԵՋ

« Հաստատել խորհելու, զգալու
գործելու սովորութիւններ. ահա
անոր մէջն է ամբողջ դաստիարա-
կութիւնը »:

Բ. — ԴՊՐՈՅԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

1. — Ի՞նչ է դպրոցը

Դպրոցն, ուր կը յաճախէք, միայն ու-
սանելու վայր չէ. այս ալ մեծ ընտանիքի մը
պէս է, ուր պէտք է ամէնքդ իրար իբրեւ
քոյր նկատէք:

Եթէ դպրոցը ձեզ ձանձրալի թուի, եւ
թէ տհաճութեամբ յաճախէք, կը նշանակէ
թէ չէք ըմբռներ հոն ձեզ սորվեցուցած բա-
ներուն օգտակարութիւնը. եւ պէտք եղա-
ծին պէս ալ իրար չէք սիրեր:

Դեռատի՛ աղջիկներ, ձեր ապագան ձեզ-
մէ կախում ունի: Դպրոցի մէջ ձեր ստացած
դաստիարակութիւնն անշուշտ ձեզ աշխա-
տութենէ չազատեր, բայց աւելի հաճելի
կ'ընէ եւ աւելի դիւրին կը դարձնէ ձեր աշ-
խատութիւնը: Ձեր միտքը կը բանայ, լաւ
գրքեր կարդալու ճաշակ կուտայ: Միթէ այս
բոլորը ոչի՞նչ է: Դպրոցը ձեզ կը սորվեցնէ
նաեւ, թէ ի՞նչ պարտականութիւն ունիք
մէկդ միւսիդ հանդէպ. վերջապէս դպրոցը
կեանքի նախափորձ վարժութիւնն է:

2. — Պե՛տք է անընդհատ յաճախել դպրոց

Վարդուհին շաբաթը գոնէ անգամ մը
բացակայ կը լինի դպրոցէն: Անցեալ օր վար-

ժուհին կը յանդիմանէր ատոր համար եւ
Վարդուհին կը պատասխաներ « Ի՛նչ նշա-
նակութիւն ունի օր մ'աւելի կամ պակաս.
միշտ բաւական պիտի սորվիմ. վերջն աշ-
խատելու պէտք պիտի չունենամ »:

Ահա շատ յիմար եւ անխոհեմ խօսք մը,
Վարդուհին չկրնար երեւակայել ինչ որ ապա-
գան վերապահած է իրեն համար: Չգիտեր
թէ ունեցած քիչ մը ստակը կրնայ գործե-
րու մէջ կորսուիլ եւ ինք կրնայ ստիպուիլ
աշխատիլ ապրելու համար: Այն ատեն շատ
պիտի ցաւի կորուսած ժամանակին վրայ,
որովհետեւ պիտի չլինի իր յարատեւ աշխա-
տող ընկերներուն հափ ուսեալ, որոնք իրենց
ստացած գիտութիւնովը պաշտօններ պիտի
վարեն: Ասկէ զատ, յետոյ երբ մեծնայ Վար-
դուհին եւ պէտք չունենայ իսկ կիրարկել իր
գիտցածը, կը կարծէ՞ք թէ մեծ անպատե-
հութիւն մը չէ ըրածը կանոնաւոր կերպով
ներկայ չլինելով դասերուն: Այնչափ կարե-
ւոր դասերն ալ եւս պիտի չլսէ եւ իրեն
համար պիտի չկրկնեն եւ քերեսս ամբողջ
կեանքին մէջ չզիսնայ այն լաւ օգտակար բա-
ները, որ իր բացակայութեան աւանդած է
վարժութիւնն:

3. Առաջուան եւ այժմեան դպրոցները

Եթէ կ'ուզէք գիտութեան արժէքը գիտ-
նալ եւ անոր կարեւորութիւնը ըմբռնել,
խորհուրդ հարցուցէք այն մարդոց, որ բան
մ'ուսած չեն կամ շատ քիչ բան գիտեն: Ա-
մէնքը ձեզ պիտի ըսեն թէ « Դուք օտաւ
զանգի կե, դեռասի աղջիկներ, որ այսչափ
դիւրութեամբ կ'ուսանիք »:

« Առաջ ուսումը ձրի չէր, եւ աղքատ-
ները բան մը չգիտէին »:

Այն ատեն դպրոցները սակաւաթիւ էին եւ շատ նեղութիւններ պէտք էին կրել հոն մտնելու համար. միայն ձմեռը կ'աշխատէին ուսման, որովհետեւ գարնան երկրագործութեամբ կը պարապէին:

Առաջ դասարանները փոքր, անյարմար, մութ եւ տխուր էին. մինչ այժմ խոշոր, լուսաւոր եւ զարդարուն են: Վերջը շատ օգտակար բաներ պիտի սովորիք. նախկին դրելու համար այլ եւս պիտի չստիպուիք ասոր անոր դիմել եւ ոչ ալ կարելոյ թուլթ մը կարգալու համար: Ահ, որչափ երջանիկ էք դուք: Օր մը, ժամ մը, վայրկեան մը մի խնայե՛ք այն ժամանակէն, որ ձեզի տրուած է ձեր միաբնակ հաճելի կերպով մշակելու համար: » Աւստիստեան մեզ յարստեւ ելե՛ք, վերջը պտուղը պիտի բաղկի:

4. — Դպրոցէն փախչողները

Ընդհանրապէս մանչերն են որ կը սիրեն դպրոցէն փախչիլ, այսինքն նախամեծար կը սեպեն ասդին անդին շրջագայիլ քան թէ դպրոց երթալ: Բայց երբեմն ազնիւներն ալ այս յիմարութիւնը կ'ընեն:

Ասիկա թէ՛ պակասութիւն է եւ թէ՛ անպիսանութիւն: Պակասութիւն է, որովհետեւ անհնազանդութիւն է, անպիտանութիւն է՝ որովհետեւ մարդ ինք իր դէմ անիրաւութիւն կ'ընէ իր ժամանակը կորսնցնելով եւ վարժուհիին դասերուն ներկայ չլինելով:

Ասկէ զատ, դպրոցէն փախչելով՝ կրտսիրպութիւն ստել, որովհետեւ պէտք կը լինի վարժուհիին բացատրութիւն տալ, թէ ինչո՞ւ համար չեն եկած, եւ յետոյ պիտի սըտեն ծնողքին առջեւ. որպէս զի չգիտնան թէ դպրոց չեն գացել, եւ անհնազանդութենէ անհնազանդութիւն, ստախոսութենէ ստախոսութիւն, վերջապէս ծուլութեան եւ կեղծատրութեան կը վարժեցնեն ինքզինքնին:

Յիշեցե՛ք որ ժամանակիլ բանկազին եւ անհնազանդութիւնը պակասութիւն եւ սուսն արհամարհելի ե:

5. — Ճշգրտութիւն

Նապաստակն ու կրիան, կ'ըսէ առածը, գրաւ կը դնէին. թէ ո՞րն առաջ պիտի հասնի որոշեալ նպատակակէտի մը: Կ'երեւէր թէ նապաստակը իր յաջողութեան վրայ

վստահ էր, քանի որ շատ արագ կը վազէր, մինչ կրիան շատ ծանր կը քալէ. բայց նապաստակն իր արագընթացութեան վրայ վստահելով սխալ ճանապարհին զբօսնուլ եւ կրիան առաջինը հասաւ նպատակակէտին:

Այսպէս շատ անգամ դպրոցականներ կան, որ շատ « ժամանակ ունիմ », կ'ըսեն, որոշեալ ժամին դպրոց հասնելու, կամ այս պարտականութիւնը կատարելու կամ այս դասը սովորելու », կ'զբօսնուն, ժամանակը կ'անցնի (որովհետեւ ժամանակը շատ արագ կ'անցնի, երբ խաղալով անցնեն): Վերջապէս կ'երթան կամ կ'սկսին դասերը սովորիլ: Բայց ուշ է, դասարան մտնելու քանի մը վայրկեան կայ. ժամանակին չեն հասնիր եւ կամ հազիւ հազ կը հասնին եւ մտքերն այնպէս կը շփոթի, որ ինչ ընելիքնին չեն գիտնար:

Ճշգրտակցութիւնը սովորութիւն ըրէք, որոշեալ ժամանակին եկէք եւ աշխատութիւնը պէտք եղած ժամանակը ըրէք: Բայց վերջի վայրկեանին մի՛ սպասե՛ք որոշելու համար:

6. — Հեղաբարոյ լինել

Հեղաբարոյ լինել, կը նշանակէ քայքայաբարոյ եւ հնազանդ լինել:

Դեռատի ազնիւներ կան, որ հրաման մը շատ անգամներ կրկնել տալէ ետք կը հնազանդին. անոնք հեղաբարոյ չեն: Ոմանք ալ կը հնազանդին արանջալով. անոնք ալ հեղաբարոյ չեն: Կան որ հնազանդած ժամանակ խոթուադէմ անհամբեր կամ բարկացած կերպարանք ունին. ասոնք ալ հլու եւ քաղցրաբարոյ չեն:

Հլու լինել, կը նշանակէ դիւրաւ առաջնորդուիլ այն անձին, որ թէ տարիքով եւ թէ՛ դիրքով հեղինակութիւն ունի ձեր վրայ: Շատ բնական է անոր հնազանդիլ. ի՞նչ դիտենք փոքր եղած ժամանակնիս: Մեր ճշմարիտ շահը կը ճանաչե՞նք արդեօք, Բաւական մտածեցի՞նք, բաւական փորձառութիւն ունի՞նք մեզի յարմար եղածն անյարմարին որոշելու համար:

Անշուշտ ոչ, ահա ասոր համար պէտք է հեղաբարոյ լինինք որ ոչ մի յիմարութիւն դործենք: Տղայ մը հեղաբարոյ լինելով կրտսրայ վստահ լինել, թէ պիտի աղնուանայ:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱՉԱՐԱՊԵՏԵԱՆ

ԱՄԽԱԳՈՐԾԸ

(ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Երբ Քրիստոս իր առաքելներուն հետ Սպանիան շրջագայէր, իրիկուն մը քաղաքէն ու գիւղերէն հեռու, երաշտ դաշտագետնի մը վրայ, հնաւոր տնակի մը հանդիպեցաւ:

Անթոնիօ անունով խեղճ ծերուկ ածխագործի մը բնակարանն էր առիկա: Սուրբ Պետրոս, երկար ճամբորդութենէ մը յոգնած, ըսաւ մեր Տիրոջ:

— Կ'ուզէ՞ք որ գիշերուան համար սա հիւղակին մէջ օթեան մը խնդրենք:

— Ինչո՞ւ չէ, պատասխանեց Տէրը:

Սուրբ Պետրոս դարկաւ դրան: Ածխագործը երկու անձանօթ ճամբորդները ընդունեց քաղաքավարութեամբ, յետոյ ձիթենիի ճիւղեր վառեց, որոնց փայլուն լոյսը փլփլկած խրճիթին մէջ տարածուեցաւ անմիջապէս, ու վերջէն, աճապարանքով, իր ունեցած ուտելիքի պաշարը սեղանին վրայ դրաւ:

Դուրսը, կաղնիին ճիւղերուն մէջէն հովը կը սուլէր, ու տնակին գէշ գոցուած պատուհանները կը բանար ուժգին կերպով:

Յանկարծ, դուռը նորէն զարնուեցաւ, և Անթոնիօ, անակնկալօրէն, ինքզինքը ուրիշ երկու ճամբորդներու դէմ գտաւ:

— Թո՛ղ տուր որ մտնեն, ըսաւ Սուրբ Պետրոս: Մեր ընկերներն են անոնք. հո՞ն ուր մէկ հոգի կրնայ ընթրել, երկու հոգիներ ալ կրնան կերակրուիլ:

Հէք ածխագործը անհանգիստ կերպարանքով մը գլուխը քերեց, իր ունեցածին անբաւականութեան վրայ խորհելով: Սակայն ներս մտցուց երկու նորեկները: Վարկեան մը վերջը իր ասպնջականութեան նոր կոչումըն ալ: Նո՛ր երեւում: Սուրբ Պետրոս, օրհներգութեան չընկը առնելով դուրս ելաւ, ու ոսկի մագերով Սուրբ Յովհաննէսը ճանչցաւ, ուրիշ աշակերտի մը հետ:

— Մեր բարեկամներն են ասոնք, ըսաւ Ս. Պետրոս, նե՛րս առ, հո՞ն ուր մէկ հոգի կրնայ ընթրել, երկու հոգիներ ալ կրնան կերակրուիլ:

Եւ խեղճ Անթոնիօն, վարանելով վ. ներս առաւ այս երկու անձանօթները, յետոյ երկու հոգի ալ, քիչ վերջը երկու ուրիշ անձեր ալ

.այնպէս որ, հետզհետէ, տասերկու առաքելները իրենց Տիրոջ շուրջը միացան:

Անթոնիօն գլխաւորապէս էր. երբ ազատ մը կարենար կշտացնել, կ'ուրախանար. բայց այս տասերկու մարդերուն, որոնք իր տանիքին տակ միացեր էին, և որոնք ահաբեկի խորթակով մըն ալ օժտուած կ'երևէին, ի՞նչ կրնար ընել:

Կաշիէ սնտուկը անգամ մըն ալ աչքէ անցուց, և իր չքաւորութեան վրայ ամչնալով, իր ամբողջ ունեցածը սեղանին վրայ դրաւ, կտոր մը հաց, մէկ քանի թուզ և մէկ երկու ողկոյզ խաղող:

Քրիստոս իր աշակերտներուն մէջ նստաւ ու մատով ածխագործին նուէրին դպաւ: Բարի Անթոնիօն ապուշի պէս դիտեց և իր աչուքներուն չկրցաւ հաւատալ. հացը շատցել: Թուզերն ու ողկոյզները բազմացեր էին:

Հրաշալի ընթրիքէն վերջը, ուղեւորները իրենց վերարկուներուն մէջ փաթթուած, կրակարանին մօտ, գետնին վրայ պառկեցան:

Առտուանց մեկնեցան ամէնքն ալ:

Իրիկուան հրաշքին յուզումին տակ, Անթոնիօ բառ մը չկրցաւ արտասանել, բայց Սուրբ Պետրոս անոր մօտենալով ըսաւ:

— Ասպնջականութիւնդ վարձատրել կ'ուզեմ, ո՛ւրիշ մը ըրէ, պիտի կատարուի առիկա: Պարկեշտ ածխագործը քիչ բանով կը գոհանար. իր բաղդէն գո՛հ փափաքներ չունէր շատ:

— Սակայն, ըսաւ, վարկեան մը մտածելէ վերջը, անտառին փայտերը կ'որած միջոցիս իրիկունները թո՛ղ տունս բազմաթիւ փայտահարներ հաւաքուին. որպէսզի հետերնին թուղթ խաղամ: Յետոյ, ամէն անգամ շահողը թող ե՛ս ըլլամ:

Սուրբ Պետրոս տրտմեցաւ. թուղթ խաղալը քաջալերել չէր ուզէր: Բայց զրկումի կեանքին, Անթոնիօի պարկեշտ նկարագրին վրայ խորհելով, հետեցուց որ այս քաջ մարդուն շարունակական շահերը, իր ընթացքին կանոնաւորութեան պիտի չը վնասէին երբեք. և թերեւ, նոյնիսկ, խաղալէ պիտի դադրէին անոնք, որոնք միշտ կ'ոտուելով պիտի յուսահատէին ա՛լ. վերջապէս հաւանելով, ըսաւ ա՛յ խաղործին:

— Փափաքդ թող իրականանայ՝, սակայն այս պայմանաւ, որ պղտիկ խաղադրամէ մը անդին չպիտի անցնիս:

Այս խօսքերը ըսելով, գնաց իր ընկերներուն միացաւ :

— Ա՛հ, պոռաց քաջ Անթոնիօն, բաղդը փնտռելով չգտնուիր. պէտք է որ անիկա հանդիպի՝ քեզի : Ո՛րչափ մարդիկ պիտի նախանձին այն երջանկութեան, որուն հասայ ես այսօր, ե՛ս, որ բանի մը պէտք չունիմ :

Իր խոստման հաւատարիմ՝ բարի ածխագործը չարաչար չգործածեց այն արտօնութիւնը՝ զոր Սուրբ Պետրոս իրեն շնորհած էր, և աղէկ օրեր անցուց իր փափաքածին պէս խաղալով :

Ծերացեր էր : Ու օր մըն ալ, իր պահապան բարի հրեշտակը զայն առաւ ուրիշ աշխարհ մը տանելու համար :

Այն ատեն մտածեց որ իր անվրէպ կառողութիւնը պարապ գոհացումի մը գործածած էր, և անմիջապէս միտքը ուրիշ լաւագոյն կիրառութեան մը գնաց Հրեշտակէն խնդրեց որ, ճամբան, մահուան անկողնին մէջ իր մեղքերէն գալարուող մարդու մը առջև տանի զինքը : Քերովբէն, այս բառերուն մէջ զթոտ դիտաւորութիւն մը նախագալով, զայն գործակալի մը մահիճին առջև տարաւ : Ազահութեան դէպք իր ճիւղները մեռնողին կ'երկարէր, մինչդեռ որդին ու բարի քահանայ մը, ծնրաչոգ, կը դրդէին որ Աստուծոյ թողութիւն խնդրէ :

— Գարամպա՛, պոռաց Անթոնիօ, մեր Տէրը բոլոր մարդոց համար մեռաւ, գործակալներուն ալ համար :

Յետոյ սատարին դառնալով :

— Նայէ՛, ըսաւ, բժիշկը կը ներհէ : Անոր քնացած միջոցին չես կրնար հիւանդը վերցունել : Ժամանակ ունիս, եկուր թուղթ խաղանք :

Շատ լաւ, յարեց Սատանը, խաղին հնարիչը, բայց ի՞նչ բանի պիտի խաղանք : Կարծեմ թէ քսակդ տունը ձգած ես : Թէ որ կորսնցնես խաղը, ինչ որ արդէն կը հաւատամ, ի՞նչ պիտի վճարես : Գէ՛ :

— Իբր խաղադրամ արդար հոգիս կը դնեմ, յարեց Անթոնիօ, անանկ բան մը, որ զբամէն շատ կարեւոր է : Քու կողմէդ ալ, եթէ կուզես, սա թշուառին հոգին դի՛ր որ քեզի կը պատկանի կարծեմ :

Շա՛տ լաւ, ըսաւ Սատանը, ի՛նչ շահելուն վրայ՝ վստահ :

Ածխագործը թողուց որ ընկերը իր ու-

զածին պէս խառնէ ու կտրէ թուղթերը : Խաղը սկսաւ : Սատանը յաղթուած էր, մէկ քանի վարկեան վերջը :

Չէր կրնար ուրանալ, ստիպուած էր իր որսը անոր ձգելու. և ամօթահար՝ խոյս տուաւ :

Գործակալը դիւային փորձութիւններէն ազատած էր : Աւետարանի քարոզիչին դարձաւ, իր մեղքերը խոստովանելով ներում խնդրեց անկէ, և իր խաղաղաւէտ հոգին ածխագործին հոգիին միացաւ :

— Ո՞վ է ան, պոռաց Սուրբ Պետրոս, որ Արքայութեան կը հսկէր :

Ու Անթոնիօն պատասխանեց :

— Ան խեղճ փայտահարը, զոր դուք կը ճանչնաք :

— Այո՛, բայց մինակ չես, ո՞վ է սա սև հոգին որ քեզի կ'ընկերանայ :

— Մինակ չեմ, ո՞վ սուրբ, վասնզի կը հաւատամ որ մեր Տէրը՝ Հաճելի է մարդոց եղբայրակցութիւնը : Քովինս գործակալի մը հոգին է : Սև է, վասնզի մեւանի բիծեր մնացեր են վրան :

— Գործակալները ներս չենք կրնար ընդունել, յարեց Սուրբ Պետրոս : Ուրեմն մինակդ ներս եկուր :

— Ա՛հ, պատասխանեց Անթոնիօ, ասանկ դժուարութիւններ չը յարուցի ես երբ դուք տասերկու ընկերներով խրճիթս կը մտնէիք : Ըսիք ինձի. « հո՛ն ուր մէկ հոգի կրնայ ընթրել, երկու հոգիներ ալ կրնան կերակրուիլ : » Միևնոյն բանը ես չե՞մ կրնար ըսել հոս :

Սուրբ Պետրոս լռեց. և ածխագործը, գործակալին հոգին իր ուսերուն վրայ առնելով, յաւիտենական արքայութեան մէջ սպրդեցաւ :

ՔՍԱՎԻԷ ՄԱՌՄԻԷ

Թրգմ. Մ. Ա. ՊԱՐՄԱՄԵԱՆ



ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Տ Ե Ր Ե Ի

(Շաբ. 23 քիւնի)

Դիտուած է որ տերեւները միշտ լոյսին կը դառնան, այնպէս որ եթէ թաղարի մէջ տնկուած բոյս մը դնենք սենեակի մը մէջ՝ որ մէկ պատուհանէ մը միայն լոյս կառնէ, պիտի տեսնենք որ տերեւները իրենց վերի երեսը լոյսին կը դարձնեն. ահա՛ զար-

մանալի երևոյթ մը: Ասկէ դատ, ուրիշ բոյսերու տերեւներ տեսակ տեսակ շարժումներ կընեն: Ճօճուն առուոյս բուսած բոյսը, որուն տերեւը կազմուած է երեք տերեւներէ, և որոնց ծայրինը ամէնէն մեծն է, կը ցուցնէ շատ հետաքրքրաշարժ երևոյթ մը: Անոր բազադըրեալ տերեւին երկու փոքր տերեւիկները միշտ կը շարժին, իբր թէ ժամացոյցի մը սլաքը ըլլային: Մէկը կը բարձրանայ և միւսը վար կիջնէ. յետոյ բարձրացողը կիջնայ և միւսը վեր կելլէ, այսպէս շարունակաբար և միշտ հաւասար շափով. իսկ ծայրի տերեւը՝ որ ինչպէս ըսինք մեծն է, աջ և ձախ կողմերը կը ծռի շարունակաբար. տերեւները այս շարժումները կը կատարեն ամէն ատեն:

Կան ուրիշ քանի մը բոյսեր, ինչպէս զգայնուկը կամ պատկառուկը և ճանճորսակը՝ որոնք նոյնպէս կը շարժին. սակայն ասոնց շարժումը ամէն ատեն չէ. արտաքին ազդեցութիւններէ կը շարժին անոնք: Ճանճորսակները շատ տեսակ են. բայց անոնց մէջէն ամէնէն կարեւորը տիոնէ կոչուածն է, որ մանաւանդ հիւսիսային Ամերիկայի մէջ կը բուսնի: Երբ ճանճեր կամ ուրիշ միջատներ նստին անոնց տերեւներուն վրայ, այս վերջինները կը գոցուին իրենց մէջ փակելով զանոնք՝ որոնց հիւթը կը ծծեն բոյսին սնունդը ըլլալու համար: Եթէ զգայնուկին տերեւներուն դպչելու ըլլանք, անոնք իսկոյն կը գոցուին իրենց մէջ բանտարկելով մատներնիս: Կըսենք թէ բոյսերը չեն զգար, կամ թէ չեն գիտեր այս իրողութիւնը. այս վերջին տարակուսական «չենք գիտեր, թերեւ...» ը կուեղցնենք տեսնելով քանի մը բոյսերու ցցուցած այս տեսակ մը զգայականութիւնը:

Այս բոլոր ծանօթութիւններէն ետք զանք ուրեմն տերեւներու պաշտօնին:

— Բայց ի՞նչու կարեւոր պաշտօնի մը համար այդ տափակ, կանանչ մասերը դուրսը կրնան ըլլալ բոյսերուն վրայ. — Անոնք բոյսերու ամէնէն կարեւոր գործարաններն են. Նախախնամութիւնը մարդուն և կենդանիներուն պարգեւած է ստամոքս մարսողութեան համար. բերան և քիթ շնչառութեան համար. բոյսերուն ալ նուիրած է տերեւները՝ որոնք կը կատարեն շնչառութեան և մարսողութեան պաշտօնները:

Արմատները հողէն կը ծծեն բոյսին համար պէտք եղած սնունդը՝ որ փայտին խողովակներուն միջոցով վեր կելլէ. այս սնունդը սակայն դուրս չէ, և կը կոչուի անգուս ալիւ՝ որ բոյսին օգտակար ըլլալու համար պէտք է գտուի, այսինքն՝ պէտք է իր մէջի աւելորդ ջուրը դուրս հանէ և ածուխ ընդունի. այսպէս, այդ ջուրը շոգիի ձևով դուրս կելլէ. ասիկա ապացուցանելը շատ դժուար չէ. առնենք թաղարով մատաղ տունի մը, որուն վրայ դնենք ապակիէ զանգակ մը՝ և արեւն լուսաւորուած տեղ մը գետեղենք. քիչ ետքը պիտի տեսնենք որ զանգակին վրայ ջուրի կաթիլներ հաւաքուած են. իսկ եթէ առարկուի թէ այդ ջուրը թաղարին հողէն կելլէ, կրնանք զանիկա լաւ մը ծածկել մետաղեայ թերթով, ու միևնոյն երևոյթը պիտի տեսնենք:

Տերեւները իրենց մէջէն աւելորդ ջուրը դուրս հանելէ ետք օդէն կառնեն թթուածին և բնածխական քթու կոչուած կազը դուրս կուտան գիշեր ցերեկ: Սակայն ցերեկ ատեն տերեւները իրենց կանաչանիւթին միջոցով կը տարալուծեն բնածխական թթուն, ածուխը կառնեն անկէ և թթուածինը դուրս կը հանեն, գործողութիւն մը որ լոյսին ազդեցութիւնովը կըլլայ: Այսպէս ուրեմն տերեւները գիշերային բնածխական թթու դուրս կուտան և ցերեկ ատեն ալ թթուածին:

Ե.

ԾԱՂԻԿ

Ի՞նչ է ծաղիկը՝ ձոր այնքան շատ կը սիրէք, պզտիկ տղաներս,

— Ա՛հ, պար՛ոն, այդ հարցու ին կը կարծէ՞ք որ չպիտի կրնանք պատասխան մը տալ. ո՛չ ընդհակառակը: Աստուած՝ որ ստեղծեց տիեզերքը՝ իսկ ք տուաւ մարդուն, և անիկա իրեն համար շատ մը զարդեղէններ կը շինէ. իր անձը պճնելու համար ամէն կարելի միջոց ի գործ կը դնէ բայց բոյսերը՝ որ այս երկնատուր շնորհին արժանացած չեն, առանց անոր անզարդ պիտի մնային, ուստի խնամող Նախախնամութիւնը մտածել է բոյսին շնորհել այս անտիական զարդը՝ զոր կը գոզնան սակայն մարդիկ իսկ զճ բոյսէն իրենց կուրծքերը, իրահները զարդարելու համար:


— Գրագէտ մը թերեւ հիանալի ձեռն այդ

մանկական գողտրիկ բանահիւսութեան վերայ, բայց գիտութիւնը ծաղրալից ժպիտ մը պիտի արձակէր անոր հանդէպ: Ծաղիկը ո՛չ թէ պարզապէս իբր զարդ դրուած է, այլ բոյսին ամէնէն կարեւոր գործարանն է. անիկա է բոյսին մայրը: Եւ հիմա որ ծաղիկներու եղանակին մէջ կը գտնուինք, շարունակելով մեր բուսաբանական դասերը, հիմա մեր քննութեան առարկան ընենք ծաղիկը:

Ահա ճիւղ մը՝ որուն վրայ ծաղիկ մը կ'պած է (պատ. 1): Դիւրին է նշմարել որ այս ծաղիկը և ուրիշներ ճիւղին վրայ հաստատուած են բարակ կոթով մը՝ որ ծաղկակոթ կը կոչուի. ծաղկակոթներու վերին մասը ընդ-

ծաղիկներու բաժակը կազմող փերթերը իրարու միացած կըլլան. այս տեսակ բաժակերը միափերթ (Պատ. 4) կը կոչուին. խակ կան ծաղիկներ ալ՝ որոնց բաժակներուն փերթերը իրարու չեն կ'պած, ինչպէս վարդին փերթերը. ասոնք ալ կը կոչուին բազմափերթ (պատ. 3): Այսպէս դեռ բաժակներու շատ տեսակներ կան՝ որոնց վրայ հոս խօսիլ աւելորդ կը համարինք:

Պսակը՝ այսինքն թերթերու ամբողջը, նոյնպէս պահպանողական մաս մըն է. և կը պատէ պտղաբերութեան գործարանները, որովհետեւ ծաղիկէն է որ առաջ կուգայ պտուղը: Թերթերը ընդհանրապէս գունաւոր




հանրապէս քիչ մը աւելի ուռեցած և լայն կըլլայ. ասիկա է ընդունաւանդը՝ որուն վրայ հաստատուած է ծաղիկին ամբողջութիւնը, ընդունարանէն վեր գտնուող սա կանանչ տերեւանման մասերը կը կոչուին փերթեր (պատ. 2) որոնք ծաղիկին բաժակը կը կազմեն: Փերթերէն ետք կը գտնենք շատ մը գունաւոր մասեր՝ որոնք քերթեր (պատ. 3) կը կոչուին՝ և որոնց ամբողջութիւնը կը կազմէ ծաղիկին պսակը: Ծաղիկին մէջ տեղէն վեր կը բարձրանան թերթիկներ՝ որոնք ծաղիկին առէջներն են:

Բաժակը՝ ծաղիկին էական մասերէն չէ. անիկա երկրորդական դեր մը ունի, որովհետեւ կը ծառայէ մի՛ միայն ծաղիկին ներքին գործարանները պահպանելու: Շատ անգամ

կըլլան և զանազան ծաղիկներու վրայ զանազան գոյներ կ'առնեն. ասոնք թէև տերեւներու ձեւակերպութենէն առաջ եկած են, աներևոյն նման կանաչանիւթ չեն պարունակեր, և շնչառութիւնով կը ծծեն օդէն թթուածինը՝ ու բնածխական թթուն դուրս կուտան: Նոյնպէս պսակներն ալ զանազան ծաղիկներու վրայ առած զանազան ձևերուն, դիրքերնուն համար, շատ մը բաժանումներ ունին:

(Շարունակելի)

ԱՇՈՏ Յ. ՊԱՉՊԱՉԵԱՆ




խակ կարգ ցուցնելու համար կը գործածուի 2, 3, 5 եւ 6 կետերը՝ իբր նշան:

Կտորակ մը գրելու համար առաջ համարիչը կը գրեն պարզ թուանշանով եւ յետոյ յայտարարը՝ կարգ ցուցնող թիւով:

Երաճեսութիւն. — Ամբողջ ճայնաստիճանը ժամանակի չափերով ու բոլոր մանրամասնութիւններով ներկայացնող նշաններ կան, զորս երկար պիտի ըլլար հոս թւելը:


Կարգալ. — Կոյրերը կարգալու համար աջ կամ ձախ ձեռքին ցուցամատը կը գործածեն՝ մէկիկ մէկիկ գրերուն վրայ դնելով եւ ամբողջ ձեռքը միշտ բաց բռնելով: Զարմանալին սա է որ յստակ կարգացողի մը չափ շուտ կրնան կարգալ իրենց գիրերը:

Գրել. — Կոյրերը՝ մեզի պէս գրելու համար կը գործածեն թերթ մը թուղթ, Յատուկ պատրաստուած կայ մետաղի թերթ մը՝ որու վրայ համաչափ հեռաւորութեամբ ու խորութեամբ, գծուած են հարիզոնական



եւ ուղղահայեաց բարակ խոռոչներ. ահա ասոր վրայ կը հաստատեն թուղթը՝ որ բաւական թանձր կ'ըլլայ: Կ'առնեն բարակ տախտակէ քանակ մը որու վրայ պզտիկ պատուհաններ կան ծակած մէկ կարգի վերայ. այս պատուհաններուն ամէն մէկին մէջ կոյրը՝ պիտի զետեղէ վեց կէտերը իւրաքանչիւր գիրին: Կրնայ նաեւ պատուհաններուն տեղ քով քովի վեց վեց ծակեր գրանուիլ՝ ամէն մէկ գիրի համար: Այս պատուհանները տեսակ մը շինուած են որ՝ առնոցմէ իւրաքանչիւրը համապատասխանէ 3 հորիզոնական ու 2 ուղղահայեաց գիծի՝ մետաղէ թերթին վրայ: Իբր գրիչ կը գործածեն կօշկակարի հերիւնին նման՝ ծայրը

փութ գործիք մը: Գրելու համար թերթ մը թուղթ կը գնեն մետաղէ թերթին վերայ եւ շրջանակի մը մէջ կը հաստատեն՝ չչարժելու համար. յետոյ քանակը երկու ծայրերէն կը բռնեցնեն շրջանակին վրայ ու հերիւնածեւ գործիքով կ'սկսին ամէն մէկ պատուհանի մէջ գիրերը գրել, այսինքն իւրաքանչիւր գիրի ինչ կէտ որ կը համապատասխանէ, առնոց տեղը հերիւնով կոխել: Թուղթը չի ծակիր բայց կռնակի կողմը թերթեւ ուռեցք մը կը ձեւանայ: Դիտեցիք որ այս գրուածքը կարգալու համար թուղթը դարձնելու եւ կռնակի կողմէ կարգալու է:



Կոյրի մը արարածը

որով պէտք կ'ըլլայ աջէն ձախ ուղղութիւն մը առնել. այս անպատեհութեան առաջքը առնելու համար կոյրերը կը վարժուին առաջուրէն աջէն ձախ գրել (այսինքն հակառակ կողմէն) իրենց գիրերը, որով երբ կարգալու համար թուղթը կը դարձնեն՝ շիտակ կուգայ:

Այս գործիքը՝ հնարուած օրէն մինչեւ այսօր՝ իր այս պարզութեան մէջ կը գործածուի. առանց մանր փոփոխութիւն մը իսկ կրելու:

Կատարելագործումներ պակաս չեն եղած թէեւ, օրինակի համար ծայրը փութ հերիւնի տեղ խոռոչածեւ պարապ գործիք մը գործածել, որով գրուած ժամանակ, կէտերը փոխանակ ամբողջովին խոռոչ մը ձեւացնելու խոր շրջանակ մը ձեւացնել որուն կեդրոնը գմբէթի ձեւով վեր կը մնայ կէտը, եւ ասով հարկ չմնար շիտակ կարգալու համար՝ հակառակ կողմէն գրել: Եւ ուրիշ շատ մը մանր մուկ բաներ՝ որոնք խիստ երկրորդական կարեւորութիւն մը ունին նախնական գիւտին քով:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԵՐ

ՊՈՇԻՄԱՆՆԵՐԸ

ՊՈՇԻՄԱՆՆԵՐԸ

Հարաւային Ափրիկէի այս բնածիններն ուշադրութեան արժանի են :

Ասոնք կը վերաբերին բոլորովին նախնական ցեղի մը զոր պէտք չէ շփոթել կեդրոնական Ափրիկէի սեւ ցեղերուն հետ : Նախ եւ առաջ կայ մորթին գոյնը, որ թուի դեղնագոյն է, քիչ մազոտ եւ գրեթէ լեկկ : Մազերնին կարճ, սեւ եւ գանգուր են : Հասակնին բոլոր ցեղերու ամէնէն կարճերէն է : շատ քիչ կան որ 1,40 մէտրէն աւելի բարձր ըլլան եւ զգալի կերպով կարճ եղողներ կան : Գանկերնին շատ երկայն է, բայց ոչ Աւստրալիացոց կամ Նոր-գալէտներացիներուն չափ : Ընդունակութիւննին շատ քիչ է : քթերնին չափազանց լայն ու տափակ է : աչուքնին իրարմէ չեղած, շրթութիւննին լայն ու ցցուած, ծնոտնին դուրս ելած, թուէրնին ներս քաշուած : երեսնին լայն ու տափակ : Բոլոր կանանց ազդերն չափազանց գեր են, որու պատճառն է ուղտին կուզին նիւթին նման ճարպային նիւթերու առաւելութիւնը :

Պօշիմանն, այս մացառներու մարդը՝ ինչպէս որ կոչած են Հոլանտացիք, էպպէս թափառական է : Օրանժ գետին եզերքն եւ Քալհարի անապատին հարաւային կողմերը կը թափառի : Հաստատուն բնակարան չունենալով ժայռերուն մէջ կ'ապաստանի, կամ թաւուտներուն մէջ տեսակ մը բոյն կը շինէ իրեն : Անոնց բնակարաններէն մէկ քանին տեսնողը, կ'ըսէ Մօֆֆա, անհնար է որ չի մտածէ թէ ասոնք մարդկային էակներու բնակարաններ են մի : Անտառուտ նահանգներու մէջ, հողին մէջ խռոչ մը կը բանան եւ ճիւղերը գլուխնուն վրայ քաշելով տեսակ մը ապաստանարան կը շինեն իրենց : Հոն, մարդ մը, իր կինն ու տղարը խռոչի խռոչ կը դիզուին կտոր մը խոտի վրայ : Մացառ չեղած տեղուանքն, իրենց խռոչն ցցուած ժայռի մը ներքեւ կը փնտռեն, եթէ քարայր մը կամ լեռան ճեղք մը չկարենան գնել » :

Ընկերական կազմակերպութեան հետքն անգամ չկայ : Ընտանիք ըստած բանն ալ անձանթ է իրենց : Նոյնպէս հազուադէպ ինչ ըլլալը չեն զիտեր : Պօշիմանը բնապէս

ամենակեր է : կրցածն ու գտածը կ'ուտէ եւ ստէպ մեծ րան չգտներ : անթութիւնը կ'ստիպէ զիրենք որ ուտեն ինչ որ կարելի է ուտել : իրենց խնջոյքի պտուղներն են սոխ, վայրի խտոր, հալուէի ցողուն, աքացիայի խէժ, եւ ուրիշ խել մը բոյսեր, որոնց շատն փնտաւար են : ախորժանօք կ'ուտեն ամէն աեսակ կենդանի էակ, ինչպէս նաեւ մողէզ եւ մարախ : մինչեւ անգամ թունաւոր օձերը կը խորովեն ու կ'ուտեն, բայց նախ կը հանեն թոյնի պահարանները որ վերի ծնօտին ակունքներուն հետ հաղորդակցութեան մէջ են : Պօշիմանն մարդակեր չէ, բայց իր վայրի դրացին, Քաֆրը, զինքը կ'ուտէ :

Պօշիմանն տղայական թեթեամտութիւն մը ունի, ամէն բանի հետաքրքիր է, բայց իր գաղափարներն շատ սնոտի են : Կը հաւատայ թէ փոքր սայլ մը մեծ սայլի մը ձագն կրնայ ըլլալ : եթէ նետը իր նպատակին չհասնի՝ յանցանքը նետինն է : Յատուկ անուն բնաւ չունին եւ լեզունին աղքատ է : Մէկ, երկու կը համբեն : մէկը՝ երկուքէն կը զանազանեն, բայց անկէց անդին չեն անցնիր : ասկէ զատ անկարող են ո՛ր եւ է բազադերեալ գաղափար ըմբռնելու, ու քաղաքակրթական փորձերու անընդունակ են : Բարեյուսոյ Գլխու գաղթականութիւններու հետ յարաբերութիւն ունեցող Պօշիմաններու հարցուցին թէ ինչո՞ւ համար խեղճ ու կրակ կեանք մը վարելու տեղ չեն աշխատիր քանի մը այծ ու ոչխար պահել : « Կենդանիք, պատասխանեցին, ստեղծուած են մեզի սընունցանելու համար, եւ ոչ թէ մենք կենդանիները սնունդանելու » :

ՀՕԹԷՆԹՕԹՆԵՐԸ

Ճշմարիտը խօսելով բուն Հօթէնթօթի տիպար մը չկայ : Իրենց մորթն Պօշիմաններու թուխ-դեղին գոյնէն մինչեւ բուն խափշիկի սեւ գոյնն կը զանազանի : հասակնին միջակ է, Պօշիմաններէն աւելի բարձր, Սուտանցիներէն եւ կուէնիացիներէն աւելի կարճ : Գլուխնին շատ երկայն է, աչուքնին իրարմէ հեռու, քթերնին տափակ, ծնօտնին ցցուած, ձեռուքնին ու ոտքերնին փոքր են : Հօթէնթօթները կ'ըսեն թէ փիղ սրտալու գացած ատեն հետերնին միշտ Պօշիման մը կը տանին, վասն զի անոր խոշոր ոտքերը հողին վրայ մեծ հետքեր ձգելով,

փրկողն այդ շաւիղին վրայէն կ'երթայ երբ յարձակողական շարժում մը ընէ: Իրաւ է թէ ասիկա տղայական կարծիք մըն է, սակայն նշանակութեան ալ զուրկ չէ:

Հօթէնթօթներն արագօրէն աներեւոյթանալու վրայ են: Բարեյուսոյ գաղթականութեան հիւսիսային կողմերը կը բնակին. ասոնք միմիայն հովիւ են և կովի ու ոչխարի մեծամեծ հօտեր ունին. աշխատութեան համար ունեցած հակակրօթիւնին միջոց հողագործութեան հեռու բռնած է գիւրենք: Իբր րոյս ուրիշ բան չեն գործածեր բայց եթէ ինչ որ բնութիւնը հայթայթէ իրենց: Խնամով պահած հօտերն իրենց աննդեան կը ծառայէ, բայց մանաւանդ եզը կարեւոր կենդանի մըն է իրենց համար. կովի կաթ շատ կ'սպառեն: Գալով բուն միսին, զայն կրակի մէջ խորովելով կամ մոխրի տակ եփելով կ'ուտեն: Սա ալ բսենք որ Հօթէնթօթն ախորժելով կը խմէ գինովցնող հեղուկ մը և հողէ մեծ ծխափողերով կը ծխէ տեսակ մը կանեփ:

Կարասիները կը բազկանան նախ եւ առաջ գէնքերէ, աղեղն, որ մէկ մէկը երկայնութիւն ունի և շատ կարծր փայտէ մը շինուած է. նիզակը, ապա մորթէ պարկեր, ծակոտ հողէ ամաններ, եւլն:

Տուն շինելու համար տեսակ մը ճարպիկութիւն ունին: Տուն ըսածնիս կէս-կլոր խղիկ մըն է, մէկուկէ մէկը բարձրութեամբ եւ չորս մէկը երկայն. այս խղիկն կը շինուի ծառի ճիւղերով. վրան մորթեր կը գոցեն և ընդհանրապէս բոլորտիքն ալ բուսային ցանկ մը կը քաշեն: Խճիթին մէջ տեղը քարերու վրայ պետեղուած է վառարանը, որու ծուխը դուրս ելլելու ուրիշ ճամբայ չունի, բայց եթէ այն ծակն, որ իբր դուռ կը գործածուի: Այս հիւղերէն 20, 30, 50 հատ կլոր մը շարուելով գիւղեր կը ձևացնեն. գիւղերն փոքր արջառներն այդ շրջապատին մէջ կանեն և եզերն դուրսը կը ձգեն մէկ քանի հողոյ պահպանութեան տակ:

Հօթէնթօթն Պոչիմանին պէս մերկ չ'է: մէջքէն կախուած է տեսակ մը մորթէ գոգնոց և ուսերն ու կռնակը գոցուած են ոչխարի մորթով մը որոստակներն չեն հաներ: Կանանց գլուխն մորթէ գդակ մը կայ, իսկ արջ գլուխն բաց կը շրջի: Կանայք ոտքի ամեն չ'են հագնիր, բայց արք ընդհանրա-

պէս մորթէ սանդալներ կը շինեն իրենց: Ոսկրէ կամ փղոսկրէ ապարանջաններն ու մանեակները սովորական են. մարմինն ին ներկելու սովորութիւնը տեղ տեղ տակաւին գոյութիւն ունի. կանայք կարմիր հողով խառն ճարպ կը քսեն երեսներն:

Հօթէնթօթներու մէջ բազմակնութիւն կայ, բայց սովորականն այս չ'է. ընդհանրապէս Հօթէնթօթ մէկ կին միայն կ'առնեն: Իրաւ է թէ կանայք նոյնքան անարգ չ'են աստ որքան ուրիշ շատ մը աւելի ստորին ժողովրդոյ մէջ, բայց վիճակին դեռ նախանձելի չ'է. ամէնէն դժուար և տաղտկալի աշխատութիւնները անոնց կը պատկանին և այսպէս է ամէն հովիւ ժողովրդոյ մէջ: Շատ մը ընտանիքներ միանալով փոքրիկ գիւղեր պղտիկ ցեղեր կը կազմեն:

Կանոնաւոր սովորութիւն մ'է ծերերն ու հիւանդներն իրենց բախտին թողուլ: Չանոնք ընկերութեան կը հեռացնեն, քիչ մը ուտեստ և ըմպելիք կուտան անոնց, և մնացեալն հոգերնին չ'է: Հիւանդն երբեմն կը բժշկուի, բայց ծերն ստոյգ մահուան մը դատապարտուած է. Խսի այնքան ընդհանուր սովորութիւն մ'է որ, զոհն իսկ չի գանգատիր. և շատ բնական կը գտնէ որ ինքն ևս քաշէ այն տանջանքներն, զորս իւր ծնողաց քաշել տուած է և իւր գաւալներն ալ պիտի քաշեն:

Մեռեալներն կը պատեն հին մորթի մը մէջ և ծակի մը մէջ խօթելով՝ քարով կամ հողով կը գոցեն: Մեծաւորաց թաղուած տեղը փոքր կոյտ մը ձևացնեն:

Եթէ անցնինք Հօթէնթօթներու կրօնական դադափարներուն նախ և առաջ կը գտնեմք անոնց մէջ տեսակ մը վհուկներ: Մեռելոց յիշատակն կը յարգեն և անոնց դիակներէն շատ կը վախնան. եթէ դամբանական կոյտի մի քովէ անցնին, անպատճառ ճամբէն քար մ'առնելով կոյտին կը նետեն, լուսնոյ ծնունդն պարելով և երգով կը սօնեն. ասոնք բոլորը շատ արմատացած են, և այն քարոզիչներ, որոնք կը կարծեն թէ Աստուծոյ գաղափարն ներմուծած են Հօթէնթօթներու մէջ, ուրիշ բան բրած չ'են բայց եթէ կասկածեցնել զանոնք թէ կայ անգութ և միշտ շարագործ էակ մը, որու կը վերադրեն բոլոր այն չարիքներն ու պատուհասներն, որոնց ենթակայ է իրենց կեանքն:

ԴԻՏԱԿԱՆ ՎԵՊ

ՓԻՒՆ ՎԵՐՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ՂԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵՂՈՆԸ

(Շարունակութիւն 23րդ թիւին)

— Հօրեղբայր, որչափ որ ալ բնական է ըսէք, նորէն տարօրինակ բան է: Հաւատալն չիգար: Ո՞վ մտքէն կ'անցնէր թէ երկրիս կեղեւին տակը ճշմարիտ ովկէանոս մը կրնայ գոյութիւն ունենալ, մակընթացութիւններով, հովերով, փոխորիկներով:

— Ինչո՞ւ չէ: ասոր հակառակ բնական օրէնք մը կա՞յ:

— Ո՛չ, եթէ կեղերոնական ջերմութեան տեսութիւնը ի բաց թողունք:

— Ուրեմն, մինչեւ հոս Տափի տեսութիւնը կ'արդարանայ:

— Այո՛, և այն ատեն երկրագունտիս մէջը՝ ովկէանոսներու և բնագաւառներու գոյութիւնը կրնանք մեկնել:

— Անշուշտ, եթէ ընդունինք թէ ատոնք ամայի են:

— Ինչո՞ւ համար. միթէ չկրնար ըլլալ որ այս ջուրերուն մէջ ապրին մեզի անծանօթ տեսակի մը պատկանող ձուկեր:

— Կրնայ ըլլալ, բայց մինչեւ հիմայ բան մը չտեսանք:

— Կարթեր չի՞նք, կարելի է բան մը որսանք:

— Պիտի փորձեմ ատիկա, Աքսէլ, որովհետեւ բոլոր այս բնագաւառներուն գաղտնիքները թափանցել կ'ուզեմ:

— Հիմա ո՞ւր տեղ կը գտնուինք, հօրեղբայր:

— Հորիզոնական գիծով՝ Իսլանտայէն 500 մղոն հեռու:

— Ամէնը այդչա՞փ է:

— Չեմ կարծեր որ 100 ձողչափ սխալած ըլլամ:

— Իսկ կողմնացոյցը միշտ հարաւ. արեւե՞ր կը ցուցնէ:

— Այո՛, դէպի արեւմուտք տառնընդ տասնի՞սն և 42 վայրկեանի խտտորումով մը՝

ճիշդ երկրիս երեսը եղածին պէս: Գալով հակումին, զարմանալի երեւոյթ մը տեղի կ'ունենայ զոր ուշի ուշով քննեցի:

— Ո՞րն է այդ:

— Սա է թէ, մագնիսացած ասեղը փոխանակ դէպի բեւեռ՝ վար ծռելու, ինչպէս ըլլալու էր հիւսիսային կիսագունտին մէջ՝ ընդհակառակը կը կանգնի:

— Ատիկէ կը հետեւի թէ մագնիսական ձգողութեան կեղերոնը՝ երկրիս երեսին ու մեր գտնուած տեղին մէջտեղը կը գտնուի:

— Ճիշդ այդպէս. և եթէ դէպի հիւսիս երթայինք, եօթանասուներորդ աստիճանին մօտիկները՝ ուր ձէյմա Ռօս մագնիսական բեւեռի գոյութիւնը հաստատեց, պիտի տեսնէինք որ ասեղը ուղղահայեաց դիրք մը կ'առնէ: Հետեւաբար այս թագուն ձգողութեան կեղերոնը՝ երկրագունտիս շատ խորերը չգտնուիր:

— Իրա՛ւ է. սակայն գիտութիւնը ատենկ բան մը չէր գուշակած:

— Գիտութիւնը, տղա՛ս, սխալներէ կազմուած է, և պէտք է որ այդ սխալները գործենք, որովհետեւ ատոնցմով միայն կարելի է հասնիլ ճշմարտութեան:

— Որչա՞փ խորը իջած ենք:

— Երեսունհինգ մղոն վար:

— Այդ հաշուով, ըսի քարտէսը նայելով՝ հիմայ Սկովտիոյ լեռներուն տակը կը գտնուինք, և Կրամերեան գօտիները իրենց ձիւնաբերձ գազաթները կը ցցեն մեր գլխուն վերեւ:

— Բայց, պատասխանեց հօրեղբայրս խնդալով, ատոնք վերցնող կամարը շատ ամուր է, վարպետ ճարտարագէտի գործ է:

— Ո՛հ, չեմ վախնար որ երկինքը վրաս փլչի: Բայց խնդրեմ, ըսէք, ի՞նչպէս ետ պիտի դառնանք:

— Ետ դառնա՞նք. ինչո՞ւ համար. ընդհակառակը ճամբանիս պիտի շարունակենք, քանի որ մինչեւ հոս եկանք ողջ առողջ:

— Բայց չեմ գիտեր ի՞նչպէս այս հեղուկ դաշտին տակը պիտի մտնենք:

— Բա՛հ, այս ծովին յատակը հասնելու համար ինքզինքս ջուրը նետել չէ միտք: Բայց, ինչպէս որ ամէն ովկէանոս ցամաքով շրջապատուած է, անանկ ալ այս ծովը Գրընլանտ է կրանիթէ ցամաքներով:

— Ատոր տարակոյս չկայ :

— Ուրեմն, վստահ եմ որ դիմացի եզերքին վրայ ո՛ր եւ է ճամբայ մը կայ :

— Որչա՞փ կը կարծէք որ ըլլայ այս ովկէանոսին մեծութիւնը :

— Երեսուն կամ քառասուն մղոն :

— Ա՛հ, ըրի, միտքէս անցնելով որ շատ շիտակ թիւ մը չէ աս :

— Ուրեմն կորսնցնելիք ժամանակ չունինք : Վաղ առտու ճամբայ պիտի ելլենք : Ակամայ՝ մեզի տանելիք նաւը կը փընտռէի :

— Նաւը ո՞րկէ պիտի գտնենք, ըսի :

— Նաւ մը չէ, տղաս, լաստով պիտի ճամբորդենք :

— Հաստ մը, գոչեցի, նաւ մը չի նկու չափ անկարելի է լաստ մը չինել, եւ նոյնիսկ չեմ տեսներ որ... :

— Չես տեսներ, Աքսէլ, բայց եթէ մտիկ ընես՝ պիտի լսես :

— Ի՞նչ պիտի լսեմ :

— Մուրճի հարուածներու ձայնը, հասկնալու համար թէ արդէն Հանս գործի ձեռնարկած է :

— Լա՞ստ մը կը շինէ :

— Այո՛ :

— Ի՞նչ, ծառեր կը կտրէ կոր... :

— Ծառերը արդէն կտրուած էին : Եկուր որ տեսնաս :

Քառորդ ժամ մը քալելէ ետքը, հըրուանդանին միւս եզերքը տեսայ Հանսը՝ որ աւազին վրայ ձգուած կիսաւարտ լաստի մը վրայ կ'աչխատէր : Քոյն ալ շատ մը հաստ տախտակներ, դերաններ կային, որոնք ամբողջ նաւատորմ մը շինելու նիւթ կրնային հայթայթել :

— Հօրեղբայր, գոչեցի, ի՞նչ է այս փայտը :

— Հիւսիսի բոլոր կոնաքեր ծառերը, չոճիներ, եղեւին, ցարասիներ են՝ որոնք ծովի ջուրերու ազդեցութեան տակ մետաղացած են : Բրածոյ ծառեր ըսածնին ասոնք են :

— Բայց այն աստի քարի կարծրութիւն պիտի ունենան, և ջուրին երեսը չպիտի կարենան լողալ :

— Իրաւ է. այս ծառերէն շատերը անխաքար դարձած են, բայց կան ալ որ դեռ նոր սկսած են ձեւափոխութեան : Տե՛ս :

Եւ փայտի կտոր մը նետեց ծովուն մէջ, որ սկսաւ ծածանիլ ալիքներուն վրայ :

— Համոզուեցա՞ր հիմայ, ըսաւ հօրեղբայրս :

— Հաւատալս չի գար կոր :

Յաջորդ օրը լաստը պատրաստ էր :

5 ոտք լայնք և 12 ոտք երկայնութիւն ունէր. հաստ չուաններով պմուր մը հիպոնաւած էր. երբ ծովը իջեցուցինք սկսաւ հանդարտօրէն տատանիլ ալիքներուն վրայ : ԼԲ .

Օգոստոս 13ի առտուն, ամէնքս ալ կանուխ մը ելած էինք, ճամբորդութիւնը նոր կերպարանք մը պիտի ստանար :

Երկու ցօղեր իրար կապելով կայմ մը շինեցինք՝ որու ծայրը հաստատեցինք առագաստակալ մը : Վրանի ծածկոյթով մըն ալ առագաստը կարեցինք : Չուան չէր պակսէր ամէն բան ամբողջ էր :

Ժամը տասներկուքին լաստին վրայ տեղաւորուեցանք, Ուտելիքները, կարասիները, գէնքերը և անուշ ջուրի բաւական պաշար մը իրենց յատուկ տեղը զետեղուեցան : Հանս ղէկ մըն ալ շինած էր լաստին ուղղութիւնը կարելի եղածին չափ շտկելու համար : Ինքը՝ ղէկին գլուխը անցաւ. ես ա՛լ չուանը կտրեցի, առագաստը բացի ու ճամբայ ելանք :

Պզտիկ նաւահանգիստէն դուրս ելած ատեննիս հօրեղբայրս ուղեց անունով մը մկրտել վայն եւ իմ անունս առաջարկեց :

— Ես ալ ուրիշ անուն մը ունիմ տալիք :

— Ո՞րն է :

— Կրաիւպէնը : Քարտէսի մը վրայ շատ ազնոր կը գրուի՝ Կրաիւպէնի նաւահանգիստ :

— Թող այդպէս ըլլայ, պատասխանեց հօրեղբայրս : Կ'ընդունիմ Կրաիւպէնի նաւահանգիստ անունը :

Ահա թէ ինչպէս սիրական Վիրլանտուհիիս անունը կապուեցաւ արկածալից արշաւանքներնուս պատմութեան հետ :

Հովը՝ հիւսիս-արեւելքէն կը փչէր շատ ոյժգին. մթնոլորտին թանձր խաւերը՝ շատ զօրաւոր մղիչ ոյժ մը ունէին : Հօրեղբայրս խիստ գոհ էր :

— Եթէ այսպէս շարունակէ, ըսաւ, 24 ժամէն առ նուազն երեսուն մղոն ճամբայ կտրած պիտի ըլլանք, և այսքան ժամանակուան մէջ վստահ՝ եմ որ դիմացի եզերքը կը հասնինք :

Կէս օրին միջոցները ահագին ջօռեր (ծո-

վու (սոտ) սկսան տեսնուիլ ծովին երեսին վրայ ծփծփուն։ Արդէն գիտէի այս տուն-կերուն աման ոյժը։ ասոնք ծովերուն մէջ 12 հազար ոտք խորութեան տակ կը դար-գանան և երբեմն անանկ ահագին խութեր կը կազմեն որ խոշոր նաւերու համարն չկը կտրեն։ Բայց կարծեմ լիտէնպրօքի ծովուն լուերուն չափ հսկայ ծովասէգեր գտնուած չեն Երկրիս երեսը։

ժիճակը բնաւ փոփոխութիւն չկրեց։ Ընթ-րիքէն ետքը՝ կայմին տակը երկնցայ պառ-կեցայ՝ ծածկոյթի մը մէջ պլլուելով։ Հանս՝ զէկին գլուխը կեցած անշարժ, լաստին ուղ-ղութեանը կը հսկէր։ Կրաւ պէնի նաւահան-գիտէն մէկնելնուս ի վեր հօրեղբայրս պաշ-տօն տուած էր օրագիր մը բռնել, բոլոր գիտողութիւնները նշանակել, շահագրգիռ երեւոյթները դրի ստնել։



Նախաջրհեղեղեան Կենդանիներ

Արդեօք ի՞նչ ահագին էր այն ուժը որ ասանկ հսկայ տուններ կը բուսցնէր։ Հա-պա ի՞նչ ըլլալու էր այս տեղերուն տեսքը երկրիս կազմութեան առաջին դարերուն մէջ։ այն ատենները՝ ուր ջերմութեան ու խոնաւութեան ազդեցութեան տակ՝ մինակ բոյսերը կ'աճէին երկրագնաիս վրայ։ Իրիկուն եղաւ, և մթնոլորտին լուսեղէն

Հոս ալ նոյն օրագիրս պիտի ընդօրինա-կեմ, այն տարօրինակ ծովագնացութեան բոլոր պատահարները կէտ աւ կէտ ընթեր-ցողներու ծանօթացնելու համար։

Ուրբաթ, 14 Օգոստոս

Հովը՝ հիւս, արեւմուտք։ լաստր ուղիղ գծի ճամբով կը յառաջանայ։ Մովեղերքը՝ հովին հակառակ ուղղութեամբ 30 մղոն հե-

ուռ է: Հորեղոնին վրայ բան մը չտեսնե-
րւիր: լոյսին սաստկութիւնը չփոխուիր: Օդը գեղեցիկ է, այսինքն ամպերը շատ բարձր են, քիչ խիտ են ու կը ծածանին սպիտակ մթնոլորտի մը մէջ:

Ջերմաչափը +32 հարիւրամասնեայ:

Կէս օրին՝ Հանս կարթ մը պատրաստե-
լով ծովը ձգեց: Երկու ժամ՝ բնաւ ձուկ մը չբռնուեցաւ: արդեօք այս ջուրերը անբնա՞կ են: Ո՛չ, Յանկարծ կարծես ցնցուեցաւ: Հանս վեր քաշեց և ձուկ մը բռնեց որ կը փալփալէր:

— Ձո՛ւկ մը, գոչեց հօրեղբայրս:

— Թառափ (Մէրսին պալըզը) մըն է, Ը-
սի, պզտիկ թառափ մը:

Հօրեղբայրս ուշի ուշով քննելով կարծիքս մերժեց: Տափակ գլուխով ձուկ մըն էր: Կը-
լոր, առաջքի մասը ոսկրուտ թեփելով ծած-
կուած, բերանը ակռայ չկար, առանց պոչի էր և կուրծքին փակած լուղակներ ունէր: Կենդանին թառափին պատկանած ընտանի-
քէն էր, բայց անկէ շատ տարբերութիւն-
ներ ունէր:

Հօրեղբայրս քննութիւնը կատարելէ վերջ
բսաւ:

— Այս կենդանին կը պատկանի ըն-
տանիքի մը որ դարերէ ի վեր անհետացած է և որուն բրածոյ հետքերը կը տեսնուին Տեփօնեան հողերու մէջ:

— Ի՞նչպէս, ըսի զարմացած. նախնա-
կան ձուկերու բնակիչներէն մին է ուրեմն ողջ բռնածնիս:

— Այո՛, պատասխանեց հօրեղբայրս քըն-
նութիւնը շարունակելով. կը տեսնես որ այս բրածոյ կենդանիները հիմակ ապրող տե-
սակներուն հետ բնաւ ո՛ր և է նմանութիւն մը չունին: Եւ ասանկ որս մը ընելը մեծ երջանկութիւն մըն է բնագէտի մը համար:

— Այո՛, բայց ո՞ր ընտանիքին կը պատ-
կանի:

— Կանօթներու կարգէն, Սեֆալա-
բիտներու ընտանիքին, Բթէրիքթիսի տե-
սակին: Բայց ասիկա մասնաւոր յատկու-
թիւն մը ունի որ ստորերկրեայ ծովերու ձուկերուն վրայ մինակ կը տեսնուի:

— Ո՞րն է այդ:

— Կոյր է:

— Կոյր է մի:

— Չէ թէ մինակ կոյր է, հապա աչք
բնաւ չունի:

Աղէկ մը նայեցայ, իրաւ էր:

Դուցէ մասնաւոր պարագայ մը ըլլար:
Կարթը նորէն նետեցինք և երկու ժամուան
մէջ շատ մը նոյն տեսակին և ուրիշ տեսակի
մը պատկանող ձուկեր բռնեցինք, որոնց
ամէնքն ալ աչք չունէին: Այս անակնկալ
որսը պաշարնիս աւելցուց:

Թարգմ.

ՋԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շարունակելի)



Ի Մ Հ Ս Խ Ս Տ Ք Ը

Կը հաւատամ, կայ Հայր Աստուած
Որ լսեղծեց երկինք, երկիր,
Արեւ, լուսին, լոյսով լեցուած
Ծառ ու ծաղիկ որ ցանուցիր:

Կը հաւատամ, Որդին Աստուած
Եկաւ աշխարհ մեր փրկութեան,
Թափեց արիւնն, բազկասարած
Խաչին վրայ, փոխան մարդկան:

Կը հաւատամ, Հոգին Աստուած,
Որ բքնակի սրտերու մեջ,
Պիտ՝ մնայ հոն ցորչափ ցաւ, լաց
Չպատճառեմք, սիրով մ'անեց:

Մարգուան

Գ.



Մ Ր Յ Ո Ւ Մ

Շարագրութեան մրցում մը բանալով մեր
նպատակն էր աւելի դրդում մը տալ դրպ-
րոցականներուն՝ իրենց նախասիրած ճիւղին
մէջ յառաջ երթալու: Այս մրցումը շատ
լուրջ բան մըն է և հակառակ մինակ դըպ-
րոցականներու միջեւ կատարուելուն կարելի
է դայն օգտակար դարձնել:

Եւ առաջին օրէն քաջալերանքը չէ որ
պակսեցաւ: Սմբատ էֆ. Դաւթեան՝ մրցող-
ներուն եռանդը աւելցնելու համար իր կող-
մէ խօստացաւ « Նոր Դպրոց » ի տասը պը-
րակները եւ « Հանդիսարտն Բարոյագիտու-
թեան » էն օրինակ մը, երկու առաջին դիր-
քերը գըրաւող պատանիներուն: Ինք իր
ձեռքով քննեց ու կարգի դնելով բոլոր շա-

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ		ԴԱՌԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ		Տարեկանը	45 դահեկան
Վեցամսեան	20 »			Վեցամսեան	25 »
Եռամսեան	10 »	Կ. ՊՈԼՍ		Եռամսեան	12 1/2 »
ՌՈՒՍՒՈՅ ՀԱՄԱՐ		ՊԱՊ ԱԼԻ ՃԱՏԵՍԻ		ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	4 րուպի	ԹԻԼ 38		Տարեկանը	10 Ֆրանք

Ձեռքէ կը ծախուի հաւոր 40 վարդալ

րադրութիւնները, զատեց՝ առաջին՝

ՊՐ. ՉԱՐԵՀ Ն. ԷՕԲՍԻՊԵԱՆ (Սըվազ)

Երկրորդ՝ ՊՐ. Յիպեմեն (Կեսաւիա)

Երրորդ՝ ՊՐ. ՆՇԱՆ Ս. ՀԵՐՄԱՆՅԱՆ (Սըվազ)

Իսկ միւսներն՝ իրենց առաջնութեան կարգով՝

ՊՐՆՅԲ. ՌՈՒՐԵՆ Յ. ՉԻՐԻՆԿԻՐԵԱՆ (Աշկ. Պէրպէրեան վարժ.), ԳՈՐԳԵՆ Տ. ՂԵՆՈՂԵԱՆ (Հալէպ), Պ. Դ. ԽՕՐԱՄԱՆՃԵԱՆ, ՍԵՂ. ՔԷՇԻՂԵԱՆ և ՏԻԳՐԱՆ Տ. ՂԵՆՈՂԵԱՆ (Ֆէնէսէ), ԳԱՐՈԱՍ Ե. ԵՍԺԵՐԵԱՆ (ԱՖ. Գաւազիսար), ԳՐԻԳՐՐ Կ. ԹԱԳԼՈՐԵԱՆ (Սաւաթիա), ԱԼԵԱԽԻ Ս. ՏԻՈԼԷՏԵԱՆ (ԱՖ. Գաւազիսար), ՅՈՎՀԱՆՆԷՍ Ա. ԱՂՉԱՐԵԱՆ (Ֆէնէսէ), Տ. ՉԵՕՔԻՐԵԱՆ (Աշկ. Պէրպէրեան վարժ.), ՀԱՄԲԱՐՃՈՒՄ ՔԷՐՈՎԵԱՆ (Աշկ. Իտատիէ վարժ. Իզմիտ), ԱՍՏՈՒԱԾԱՍՏՈՐ ՃԱՆԿԵԱՆ (Աշկ. Իրրանոսեան վարժ.), ՏԻԳՐԱՆ Գ. ՊԱՊԻԿԵԱՆ (Մալաթիա), ՆՇԱՆ ԵԱՅԼԵԱՆ (Սըվազ), ՅԱԿՈՐ ՂԱՉԱՐՈՍԵԱՆ (Աշկ. Ֆրանս. վարժ. Իզմիտ), ԳԷՐՈՂ ՍԱՐԳՍԵԱՆ. Մ. ԹԻՐԻԹԻՆՃԵԱՆ (Իրրանոսեան վարժ.):

Առանց յիշելու ինը պատանիներու անուններ որոնք մասնակցութենէ մերժուեցան՝ որոշուած կանոններուն չհամակերպելուն համար:

Հոս ներողութիւն կը խնդրենք քանի մը դիտողութիւններ ընելու մեզի ղրկուած պատասխաններուն վրայ:

Բոլոր ընդունած շարադրութիւնները, րացի երկուքէն, դրէթէ միջինէն վար դիրք մը գրաւեցին: Մեր դպրոցականութիւնը ինքզինքը գրադիտութեան տուած գլուխը առեր չգիտեմ ուրտեղները կ'երթայ: Ահա միջոց մը տուինք իրենց գաղափարին աւելի ճշտացնելու, լեզունին մաքրելու, մըտքերին սրելու: Ինչո՞ւ համար չեն պատասխաներ: Չեն ուզեր պատասխանել թէ չեն կընար: Մենք պիտի փափաքէինք որ

առաջին պատճառը ըլլար իրաւը, թէեւ իրական փորձը կը ցուցնէ թէ մեր երիտասարդ դպրոցականներուն քով երեւակայութիւնը (imagination) բնական գոյութիւն չունի և անոնք անկարող են իրենց բացատրելու: — Զգալ, գաղափար մը կազմել եւ այդ գաղափարը ճշդիւ արտայայտել, ահա՛ գրողի մը հական յատկութիւնները: Մեր ուսանողները բնաւ չցցուցին ոչ պիտող ոգի մը, ոչ զգայուն սիրտ մը եւ ոչ ալ գաղափարի տիրացում մը:

Եւ սակայն ամբողջ զգայնութիւն. հոգի մը կարելի էր դնել Գիւղական ճաւին մէջ, գիւղական ամէնասիրուն պատկեր մը կարելի էր գծել Հօսեփոս Վերադարձը նիւթով, ճիշտ դատողութիւն մը կը պահանջէր Անկաղք Գրասեղանը: — Ու ասոնց և ոչ մէկը գտանք մեզի հասած գրութիւններուն մէջ. գեղջուկ ըլլալու համար՝ ուսմիկէ աւելի վար բացատրութիւններ կային անոնց մէջ. անդին աւելին քաղուած նախադասութիւններ գրուած էին առանց կապակցութեան:

Անշուշտ մեր դպրոցականները վատեցնելու համար չէ որ կը մատնանչենք այս պատանիները. հապա անոնց օգնելու որ ճանչնան իրենց սխալները եւ զանոնք ուղղեն:

* * * Սակէ վերջը յաջորդաբար պիտի տանք միջոցներուն արդիւնքները կարգաւ:

Նոր Մրցում

Բ՞նչպէս անցուցիր քննութիւննիդ:

Մի՛ մոռնաք քիչ մը սրբաբանութիւն դնել՝ շարադրութիւններնոր մէջ և թերթին ծածկոցին վրայի կտրոնը՝ պահաւանին մէջ):

ԽՐԱՅՐԱՊԵՏ — ԱՐՏՈՒՍՏԷՐ

ԱՐՄԷՆ ԱՌԻՍԷՆԵԱՆ

ՏՊԱԳԻՒՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ն. ՇԱՆ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 33, Իգտամ լրագրի գէտ

—մեն ցածրագրամմալ զք սխալնովք արգելադրանքսք քն արձանագիստ ար դիմող , մեռիմ
 զմառի 12-յաշն , ցածրատառնով ԿՄԳԼԻՈԳԱՍԿԻ Ե ԵՄ ԿՄԿԻՂԴԻՄԻ Ի ԻՄԵՐԵԱ զն Նադ
 Ի զն ԳՐԻՄԻԱ ԿՈՇ ԻՂԻՂ ԻՆՄԱԳԱԿԳՐԻԻ Ա ԻՆՄՈՒԳԱՆԻՆ ԵՄԻՄԿ ԻՄՈՒԿ ԿՈ ԻՂԻՂ ԵՂԻՂ
 ԿՄԻԿԱ ԿՄԻԿԱ ԿՄԻԿԱ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՊԵՐ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻՒ ՅՏ. ԻԳՏԱՄ ԼԵԱԳՐԻԴԻՄԱՑ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը սպագրէ ամեն
սեսակ գիրքեր, ման-

ագրեր, հանդէսներ, շրջաբերականներ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագրութիւններ, այ-
ցաբարդեր, եւ սպագրութեան վերաբերեալ ամեն սեսակ պիտոյքներ: — Տպարանին սեփական
20000է աւելի պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի:

Անմրցելի մաքրութիւն եւ նշագրահմարմար

գաւառներէն ալ կ'ընդունի ամեն տեսակ յանձնարարութիւններ:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն
մասնակցողները պարտին սոյն կտրոնը կտրելով՝ իրենց գը-
րութեանց հետ շրջել Խմբագրութեան, հակառակ պարա-
գային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հատ
40, իսկ գաւառաց մէջ 50 փարսայ:

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Լ Ն Տ Ի Ր

Հ Ս Տ ՈՒ Է Տ

Խ Ն Ա Յ ՈՂՆԱԿԱՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և ԹԷ օր ըստ օրէ
ասնող Թարմ և ազնուագոյն տեսակ Թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ
գոհացում տալ նոյն իսկ էն խտապահանջ Թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆ հառտատութիւնը կը Թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը
կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ Թէյ գործածողներու ջերմագէտ կը յանձնարարենք ան-
գամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ճէլալ-Պէյ խանի
կից Թիւ 10, ուր պիտի դտնեն մեծաքանակ և փոքրաքանակ Թէյի ձոխ մթերք մը:

Ա Ժ Ա՛Ն

Ա Ժ Ա՛Ն

Ա Ժ Ա՛Ն